

Ք Ի Ի Ր Դ Շ Է Յ Խ Ը

(Ասոնց կրօնական եւ քաղաքական ընդհ. գործունեութիւնը
երջան առ երջան)

Քիւրդ Շէյխութեան շրջանը կարելի է բաժնել չորսի .

1. Վիպական շրջանը . 2. Կրօնականը . 3. Կրօնա-իշխա-
նապետականը . 4. Կրօնա-քաղաքականը :

Վիպական շրջանը կ'սկսի այն ատենէն , երբ քիւրդերը
նոր կ'ընդունին Իսլամութիւնը . իրենց բացարձակ նախնակա-
նութեան համար անկարող լինելով ըմբռնել Մահմետական
կրօնի իսկական էութիւնն ու նրբութիւնները , անոնք Շէյխե-
րէն կը պահանջէին գերմարդկային զօրութիւն , հրաւեմեր :

Շէյխերը այդ ժողովուրդը նոր կրօնի վարդապետութեան
ու ուսմանց վարժեցնելու համար , շատ անգամ ստիպուած
էին անոնց հրեակայական պահանջները մասամբ մը գոհացնե-
լու ձեւ առնել , ինչպէս այդ եղած է և Քրիստոնեաներու մէջ ,
որոնք իրենց նոր կրօնը զուտ և առանձակի տալ չը կրնայով
արեւելեան ժողովուրդներուն , պատուաստեցին այն անոնց հին
վարդապետութիւններու , ծէսերու և յատուկ սովորութիւն-
ներու վրայ :

Չանագան աւանդական պատմութեանը քիւրդերու հա-
մար , կը բնորոշեն այդ նախկին շրջանը իրր վիպական :

Կրօնական շրջանը կ'սկսի այն ատենէն , երբ Քիւրդերը
կամաց կամաց կը վարժուին նոր կրօնին . այս շրջանի մէջն ալ
իրենց վիճակին բերմամբ , հազիւ կրցեր են վրանին կրել նոր
կրօնի զուտ պաշտօնական երեոյթը՝ հակառակ Շէյխերու ջա-
նադիր ազդեցութեան : Բայց այս քայլը այնու ամենայնիւ
յառաջդիմութիւն մը կը լինի Շէյխերու համար քիւրդերու
նկատմամբ :

Կրօնա-իշխանապետական շրջանը այն ժամանակ կը յա-
ջորդէ , երբ Շէյխերը իրենց պաշտօնի յաջողութեամբ որոշ